ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Մարգարիտ Աշոտի Պետրոսյանի «Հարավային Կովկասի հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների ընդհանրություններն ու առանձնահատկությունները» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հարավային Կովկասում խաղաղության ամրապնդման, անվտանգության ապահովման և երկխոսության վրա հիմնված համագործակցային մթնոլոտի ձևավորման հարցում թերևս ամենաառանցքային խնդիրներից մեկը տարածաշրջանային հակամարտությունների կարգավորումն է ու երկարատև խաղաղության հաստատման հեռանկարը: Հարավկովկասյան երեք հակամարտություններն էլ անցել են զարգացման մի շարք փուլերով, սակայն այդ խնդիրները վերջնական լուծում չեն ստացել՝ նպաստելով անկայունության մթնոլորտի ձևավորմանը՝ երկխոսության բացակայության պայմաններում:

Հակամարտությունների կարգավորման գործընթացների խոչընդոտները հետևանք են հետաքրքրությունների տարբերակման, աշխարհաքաղաքական շահերի ու նպատակադրումների բախման և բազմաթիվ այլ հիմքային գործոնների առկայության: Հակամարտություններն ու դրանց զարգացումն ունեցել են տարբեր զարգացումներ, ինչն էլ հանգեցրել է հակամարտային հարաբերությունների սրացման՝ ընդհուպ նաև ռազմական գործողությունների մեկնարկի հակամարտությունների զարգացման տարբեր փուլերում:

Տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման նպատակով ստեղծվել են միջնորդական տարբեր ձևաչափեր՝ նպատակ ունենալով հարթել տարբեր խնդրահարույց դիրքորոշումներն ու մոտեցումները, ձևավորել խնդրի կարգավորման հնարավոր տարբերակներ ու բանաձևեր: Այնուամենայնիվ, միջնորդական տարբեր խմբերի, ինչպես նաև առանձին պետությունների գործունեության արդյունավետությունը

խիստ վիճելի է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կարգավորման գործընթացներում առարկայական առաջընթաց չի արձանագրվում:

Արցախյան հակամարտության կարգավորումն առանցքային նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության անվտանգության պահպանման համատեքստում, իսկ կարգավորման ձգձգումն իրական վտանգ է ներկայացնում ոչ միայն ԱՀ-ի և ՀՀ-ի, այլև տարածաշրջանի կայունության և անվտանգության համար առհասարակ: Ուստի Արցախյան հակամարտության համալիր ուսումնասիրությունը և տարածաշրջանային մյուս երկու հակամարտությունների հետ համեմատությունն կարևոր նշանակություն ունի՝ ԱՀ-ի և ՀՀ-ի անվտանգությանը սպառնացող մարտահրավերներն ու սպառնալիքները գնահատելու, հակամարտության կարգավորման հնարավոր մեխանիզմներն ու ելքերը ուրվագծելու տեսանկյունից:

Նշվածի հաշվառմամբ միանգամից աչքի է ընկնում Մարգարիտ Պետրոսյանի կողմից ներկայացված ատենախոսության արդիականությունն ու գիտագործնական արժեքայնությունը: Աշխատանքն առանձնանում է նաև տարածաշրջանի մյուս երկու՝ Հարավային Օսիայի և Աբխազիայի հակամարտությունների կարգավորման գործընթացների հետ համեմատական վերլուծության իրականացմամբ:

Կառուցվածքային առումով հետազոտությունն իրականացվել է աշխատանքի շրջանակներում բարձացված հիմնախնդիրների և դրանց լուծման տրամաբանական հաջորդականության ապահովման սկզբունքով:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ներածության մեջ հիմնավորել է թեմայի արդիականությունը, սահմանվել են նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության մեթոդները, տեսական և գործնական նշանակությունը: Ներկայացվել են աշխատանքի գիտական նորույթը, ստացված արդյունքների տեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության «Հակամարտությունների հետազոտության մեթոդներն ու համեմատական ուսումնասիրությունների մոդելավորման խնդիրները» վերտառմամբ գլխում դիտարկվում են հակամարտությունների վերլուծության ժամանակ անենահաճախ կիրառվող քաղաքագիտական մեթոդները, հակամարտությունների ուսումնասիրության ժամանակ համեմատական մեթոդի կիրառման խնդիրները: Առանձին ենթագլուխներով

անդրադարձ է կատարվում համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրներին և վերլուծության ընթացքում կիրառվող փոփոխականների համախմբի ընտրությանը:

Ատենախոսության երկրորդ՝ «Հարավային Կովկասի հակամարտությունների հատկանիշներն ըստ համեմատական վերլուծության ժամանակ օգտագործվող չափանիշների» վերնագրով գլխում ներկայացվում են Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի հակամարտությունների հիմնական հատկանիշներն ըստ համեմատական վերլուծության մոդելում ներառված փոփոխականների համախմբի և մեկնաբանվում են իրականացված համեմատական վերլուծության հիմնական արդյունքները:

Ատենախոսության «Ժողովրդավարացման ազդեցությունը հակամարտությունների կարգավորման գործընթացների վրա: Հարավային Կովկասի դեպքը» վերտառությամբ երրորդ գլխում հեղինակը ներկայացրել է հետկոնֆլիկտային հասարակություններում ժողովրդավարացման խթանման գործընթացի վրա ազդող հիմնական գործոնները, առանձնահատկությունները, գրանցած հաջողությունները: Առանձին ենթագլուխներով դիտարկվում են Հարավային Կովկասի չճանաչված պետություններում բազմակուսակցական համակարգերի ձևավորման հնրավորությունները, համապատասխան իրավական հիմքերը, ինչպես նաև այդ պետությունների՝ ինտեգրման տարբեր կառույցներին անդամակցության կամ համագործակցության հնարավորությունները:

Արդյունքում կարելի է փաստել, որ ատենախոսությունում համակողմանի ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել առաջադրված խնդիրները: Ատենախոսության եզրակացություններում հանրագումարի են բերվել հիմնական արդյունք-ները: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը՝ հանդի-սանալով դրա հիմնական դրույթների արտացոլումը: Հեղինակի կողմից հրապարակված թվով յոթ գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Մ. Պետրոսյանի կողմից պաշտպանության է ներկայացված Հայաստանի Հանրապետության քաղաքագիտության համար հետաքրքրություն ներկայացնող աշխատանք, որը սակայն զերծ չէ որոշ բացթողումներից: Մասնավորապես.

1. Ատենախոսությունն ունի ենթավերնագիր, որը նվիրված է Հարավային Կովկասի հակամարտությունների մասին միջազգային կազմակերպությունների՝ ՄԱԿ-ի և ԵԽԽՎ-ի ընդունած բանաձևերին: Սա իսկապես կարելի է գնահատել կարևոր հարցադրում: Սակայն միաժամանակ հարկ է նաև փաստել, որ այս հատվածում հետազոտական վերլուծական բաղադրիչը շատ թույլ է, միայն շատ համառոտ նկարագրություններ են ներկայացվում, համեմատական վերլուծությունը որոշակիորեն մակերեսային է: Բացի այդ, տվյալ համատեքստում ԵԱՀԿ բանաձևերը նույնպես կարելի էր ուսումնասիրել: Վերջնարդյունքում էլ այդ ուղղությամբ չեն արվել հստակ եզրահանգումներ, թե որքանով են դրանք նպաստել հակամարտությունների կարգավորմանը:

2. Մեր կարծիքով աշխատանքը կշահեր, եթե հակամարտությունները առանձին ենթավերնագրով համեմատվեին արտաքին ազդեցության գործոնների տեսանկյունով: Օրինակ, կարգավորման գործընթացը որքանով է շաղկապված նաև Իրանի և Թուրքիայի ազդեցության հետ, որոնք առավել հստակ շահեր ունեն, քան, ասենք, Եվրամիության առումով:

3. Հարկ է նաև ընդգծել, որ երեք հակամարտություններից ներկայումս միայն ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ է գործում միջազգային միջնորդական առաքելություն, իսկ աբխազական և հարավօսական հակամարտությունները միջազգային կարգավորման գործող ձևաչափ չունեն: Այս հանգամանքը համեմատական վերլուծության մեջ անհրաժեշտ էր ավելի հանգամանալից ներկայացնել: Նույն կերպ պետք էր հետազոտել նաև, թե Աբխազիայի և Հարավային Օսիայի մասնակի ճանաչված լինելու կարգավիճակը որքանով է նրանց առավելություն տալիս չճանաչված պետության կարգավիճակ ունեցող ԼՂՀ-ի հետ համեմատած:

4. Հարավային Կովկասի չճանաչված պետությունների միջազգային ինտեգրման հնարավորությունները ատենախոսության առանձին ենթագլխով դարձնել հետազոտության առարկա, մեր կարծիքով, այդքան էլ նպատակահարմար չէ, որովհետև ինտեգրում հնարավոր է Աբխազիայի և Օսիայի դեպքում միայն Ռուսաստանի հետ, իսկ Արցախի դեպքում, թեկուզ տեսականորեն, բայց միայն Հայաստանի հետ (ելնելով նաև Արցախի Հանրապետության ձեռքբերված ինքնուրույն պետականության

իրականությունից): Միջազգային իրավունքը և աշխարհաքաղաքական դրությունը պարզապես այդ հարցի լուծումը առայժմ զուտ տեսական հարթության վրա են թողնում:

Նշված դիտողություններն ու նկատառումները կհարստացնեին ատենախոսությունը՝ հնարավորություն տալով հեղինակին առավել խորը բացահայտելու և գնահատելու առաջադրված նպատակներին ու դրանցից բխող խնդիրներին վերաբերող հետազոտական շրջանակները:

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու շարադրանքի փոխկապակցված տրամաբանությունը, հեղինակի գիտական պատրաստվածությունը, վերջնարդյունք եզրահանգումները՝ գտնում եմ, որ Մարգարիտ Աշոտի Պետրոսյանի «Հարավային Կովկասի հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների ընդհանրություններն ու առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն էլ արժանի է ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

ՀՀ ՊՆ ներքին քննությունների վարչության պետի տեղակալ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Տ.Տ.ՔՈՉԱՐՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոս Տիգրան Քոչարյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ՀՀ ՊՆ գլխավոր քարտուղարի տեղակալ – քարտուղարության պետ **Ս.Զ. ՊՈՂՈՍՅԱՆ**

07.07.2020թ.